

ՄԵՆ, ԹԱՂՈՒՄՆ ԵՒ ՄԵՌԵԼՈՑ

Երբ հիւանդը մերձիմահ է լինում՝ շտապում են կանչել քահանային, որ Հազորդութիւն տալու հոգեվարքի ժամանակ հիւանդին տեղափոխում են մի ուրիշ անկողին, բարձրը ցածացնում են, ջուր խմացնում, որպէսզի հեշտութեամբ հոգին աւանդէ:

Մեռնելիս՝ աչքերը փակում են, ծնօտը բռնում, որ բերանը բաց չմնայ, ոտի բոլթ մատերը կապում միմեանց, որ ոտները ուղիղ մնան: Յետոյ բաց են անում դուռը, որպէսզի հրեշտակը «փակ չմնայ» և կարողանայ ազատ շրջել հոգու հետ միասին:

Անմիջապէս հրաւիրում է քահանան, որ օրհնում է լողացնելու ջուրը: Ձմեռը ննջեցեալին սննեակումն են լողացնում, իսկ ամառը դրսում, կապերտներով մի անկիւն շրջափակելով: Լողացնելու համար՝ հարեանները գալիս մի տախտակ են դնում, ննջեցեալին երեսը արեւելք դարձրած պառկեցնում տախտակի վրայ, ոտների մօտ մի փոս փորում, որ ջուրն այնտեղ թափուի, և «Աստուած հոգին լուսաւորէ» ասելով՝ լուանում են նախ գլուխը, յետոյ կուրծքը, մէջքը և ապա աջ և ձախ ոտները: Աւելացած ջուրը տանում տնեցիների և գիւղի հիւանդների ոտներն ու ձեռներն են լուանում, որպէսզի տնեցիների վախն անցնի, իսկ հիւանդներն ստանան ննջեցեալի կեանքի արեւը: Այնուհետեւ ութ օր շաբունակ այս տեղում մօմ կամ ձիթի ճրագ են վառում:

Յետոյ կտաւով պատնքում են, ոտներից մինչև կուրծքը կարում և մնացած մասը բաց թողնում: Եթէ ննջեցեալը կին է՝ գլխին մի «աղլուխ» են կապում, իսկ ծնօտին մի ուրիշ կտոր, որ կանաչ կամ կարմիր է լինում՝ եթէ ննջեցեալը

երիտասարդ էր, և սև կամ կապույտ՝ եթէ պառու: Ապա փաթաթում են կապերտով և գնում նաշի մէջ, նախապէս գլխի տակ մի բարձ գնելով: Շատ հարուստները ննջեցեալին շորեր են հագցնում, իսկ պատանքը գլխի տակ են գնում, որովհետև առանց պատանքի չէ կարելի ներկայանալ Քրիստոսին:

Այսպիսի (հարուստ) ննջեցեալին դագաղի մէջ են գնում, որի երեսին կարմիր կամ կանաչ շոր է քաշած լինում՝ եթէ ննջեցեալը երիտասարդ է լինում, և կապույտ կամ սև՝ եթէ չափահաս է կամ ծեր:

Հարուստները իրենց սիրելի ննջեցեալին մի կամ երկու օր պահում են տանը, իսկ աղքատները նոյն օրը կարգը կատարել են տալիս և տանում եկեղեցի: Թաղումն ևս աղքատներինը տեղի է ունենում հետևեալ օրը, մինչդեռ հարուստներինը՝ տևում է մի քանի օր և նոյն իսկ մի շաբաթ:

Ամբողջ ժամանակ լացն ու կոծը անպակաս է լինում: Կանայք, իրենց գլուխ ունենալով մի չլալկան մէքը, որ գիւղի մէջ լալտնի է լինում որպէս լաւ ողբեր ասող՝ լալիս են և կոծում: Նրանց ձայնը շատ հեռուից լսելի է լինում: «Լալկան մէքը» գովասանք է ասում լալագին ձայնով, որը միւսները կրկնում են:

Մինչև թաղումը ննջեցեալի տնեցիք—տղամարդիկ, կանայք, տարին լրացած հարսներ, առաւօտ և երեկոյ եկեղեցի են գնում ու ժամասացութիւնից լետոյ լաց լինում, վերադառնում:

Եթէ ուզում են ննջեցեալին պատարագով թաղել՝ նախընթաց երեկոյին հրաւիրում են քահանային և մի քանի մօտիկ բարեկամների, թէյ և ընթրիք տալիս: Գիշերն էլ քահանային ուղարկում են մի շիշ գինի, մի քանի ձոմ և նշխարի ալիւր:

Պատարագին ներկայ են լինում ոչ միայն տղամարդիկ, այլ և կանայք, որ լուռ մնում են մինչև աւարտը: Երբ սկսում են ննջեցեալի կարգը կատարել՝ մինը մի ափսէի մէջ խուճկ, նշխար, բամբակ և մի քառակուսի ութածալ կտաւի կտոր

գրած բերում է և ներկայացնում պատարագիչ քահանային: Սա վերցնում է կտաւը և նրա միջից դէպի ծալրը դանակով կտրում, բաց անում և տալիս բերողին: Կտրելուց ձեւանում է մի խաչ: Սա կոչւում է վարչամակ: Բերողը այն լանձնում է պատան կարողին: Եւ սա նշխարը մի քիչ խնկի հետ դնում է ննջեցեալի բերանին, խուճկը փաթաթում բամբակի մէջ և դնում նրա պնչերն ու տկանջները, ապա վարչամակը ձգում երեսին և պատանքի բաց մասը կարում:

Երեխաներին վարչամակ չեն ձգում, այլ միայն երկու մոմ երեք անգամ միմեանցից վառելուց և հանգցնելուց յետոյ դնում են երեխայի ձեռին, և այս այն լուսով, որ նա միւս աշխարհում մոմով դիմաւորէ ծնողներին և նրանց առաջնորդէ դէպի արքայութիւն: Երեխայ ննջեցեալին զոհ են համարում Աստծուն և այգպիտի ննջեցեալ չուճեցողը չէ կարող լուսալ արքայութիւն դնալու:

Կարգը վերջանալուց յետոյ սկսւում է կանանց հանդիսաւոր ողբը, որին մինչև այդ ժամանակ քահանայի աղօթքը մասամբ խանգարում էր: Էւալկան մէրըն նստում է ննջեցեալի սնարի մօտ, իսկ միւս կանայք շրջապատում են գագաղը, որ գետնին է դրած լինում: Էւալկան մէրն երգելով ասում, միւսները կրկնում են և լալիս: Ահա մի նմուշ այդ ողբից.

Ռախտած երեսիտ մատաղ,

Սարը (դեղին) ալոչերիտ (ծամ) մատաղ,

Սոնյսրը (անվախճան) ջանիղ (կեանք) մատաղ,

Կտրած ունոմիտ (յոյս) մատաղ:

Կսկծալի ջանս քե մատաղ,

Մրմնջալի ջանս քե մատաղ,

Բալա՛ (որդի)...

Դագաղը կանանց գրկախառնութիւններից ազատելով՝ դուրս են բերում և դնում եկեղեցու բակը: Այստեղ էլ քահանան և տիրացուներն են ձայները ձգում և դանձ ասում: Ննջեցեալի վրայ դնում են մի ափսէ, և բոլորը գալիս դրամ են ձգում, որ երեցփոխը վերցնում է քահանային լանձնելու:

Երբ ննջեցեալին մօտիկ բարեկամները դադաղը վերցնում են գերեզմանատուն տանելու՝ կանայք չեն հետևում, այլ մնում են, մի քիչ էլ լաց են լինում և ապա դնում տուն, բերում են ննջեցեալի շորերը, միմեանց մէջ անց կացրած, դնում իրենց առաջ և լաց լինում ու երգում:

Յուդարկաւորութեան կէս ճանապարհին նորից են գանձ ասում և փող հաւաքում: Վերջապէս հասնում են գերեզմանատուն:

Դերեզմանը փորում են գիւղի աղքատ մարդիկ, որոնց իբր վարձ տալիս են ննջեցեալի հին շորերը: Թէ տղամարդկանց և թէ կանանց համար միաջափ, մօտ 1,4 մետր (երկու արշին) խորութեան է լինում գերեզմանը, բահը և թին խաշաձև դրած վրան: Դադաղը դնում են գերեզմանի աջ կողմը և կարգը կատարում: Քահանան հող է օրհնում մի ուրիշ քահանայի և կամ տիրացուի բռի մէջ և ձգում գերեզմանի մէջ: Այս ժամանակ թոկերով իջեցնում են դադաղը գերեզմանի մէջ. իսկ եթէ նաչ է՝ մինը մօտնում է գերեզմանի մէջ, վերցնում կապերտի մէջ դրուած կտաւէ բարձը և դնում գերեզմանի մէջ. ապա միւսները կապերտից հանում են ննջեցեալը և տալիս նրան, որ գրկում և պառկեցնում է գերեզմանի մէջ: Այս ժամանակ քահանան մօտիկ անձնաւորութեան բռում հող է օրհնում, որի ընթացքում միւս ազգականներն էլ բռերը հող են առնում, և երբ օրհնութիւնը վերջանում է՝ բոլորը ածում են ալդ հողը ննջեցեալի վրայ: Ապա ծածկում են դադաղի խուփը, և մինչդեռ քահանան «Փառք ի բարձունս» է ասում՝ գերեզմանահատներն ու յուդարկաւորողները հողով լցնում են գերեզմանը: Երբ կարգը վերջանում է՝ բոլորը ձեռք են տալիս մօտիկ ազգականներին և ասում. «Սուրբ հոգով մխիթարուէք»: Ապա բոլոր յուդարկաւորողները գալիս են ննջեցեալի տունը «ժամհաց» ուտելու: Մինչդեռ հիւանդ ժամանակ խնայում են մի հաւ անգամ մօրթել, նրան ուտեցնելու՝ մեռնելուց յետոյ մի եղ են մօրթում հոգու հաց տալու: Սրանից պատրաստում են բոգրաշ, հարուստները նաեւ փլաւ: Իսկ եթէ պառ է՝ լոբի-

ջուր և փլաւ: Նախ ճաշում են տղամարդիկ և ապա կանայք: Տղամարդիկ հացից յետոյ անմիջապէս ցրւում են, իսկ կանայք նոցից լաւաջ են բերում ննջեցեալի շորերը, լալիս, գովում և ապա ջուր ման տծում, աչքերն ու ձեռները լուանում և ցրւում:

Հետեւեալ օրը վաղ՝ կանայք գնում են գերեզմանատուն, նստում գերեզմանի շուրջը, լալիս, սուգ ասում, ջուր ածում վախեցողների վրայ, որ վախն անցնէ, և վերադառնում են տուն: Նրանցից յետոյ տղամարդիկ են գնում, տանելով իրենց հետ քահանային, որ օրհնում է գերեզմանը և կատարում «այգը»: Ապա վերադառնում են տուն և հաց ուտում:

Հարուստները եօթն օր շարունակ «ամբիծք» են կատարել տալիս, ալսինքն երեկոյեան ժամերգութեան ժամանակ տղամարդիկ գալիս են եկեղեցի, քահանային «ամբիծք» կատարել տալիս և նրան, մի քանի մօտ բարեկամների հետ միասին տանում տուն, թէյով և ընթրիքով հիւրասիրում: Երբեմն էլ մօտիկ ազգականները ննջեցեալի տղամարդկանց և տան պառականերին, քահանայի հետ միասին իրենց տունն են տանում պատուելու:

Այս եօթն օրուայ ընթացքում հեռու տեղ գտնուող բարեկամներն էլ, եթէ կարողանում են՝ գալիս են և քահանայի հետ գնում ննջեցեալի գերեզմանը օրհնել տալիս:

«Եօթը» լրանալիս՝ կանայք և տղամարդիկ, մօտ և հեռու ազգականների հետ միասին գնում են գերեզմանատուն, ուր երկար լաց լինելուց և սուգ անելուց յետոյ՝ քահանային կատարել են տալիս «եօթի» կարգը: Ապա ուրիշ գիւղից եկած ըարեկամները, եթէ ուզում են շուտով վերադառնալ՝ օրհնել են տալիս գերեզմանը. յետոյ բոլորը վերադառնում են նրնջեցեալի տունը, հաց ուտում և հեռաւոր բարեկամները ցրւում են, իսկ մօտիկները մնում՝ սափրուելու: Անմիջապէս կանչւում է սափրիչը, որ սկսում է նախ ամենամօտիկ ազգականի մօրուքը սափրել և յետոյ հետզհետէ բոլորինը. որովհետեւ այդ ութ օրուայ ընթացքում ոչ մէկը, ի նշան սգի, չէ սափրւում:

Նոյն օրը, ճաշից լետու, կանալք լուանում են ննջեցեալի և սրա տանեցիների շորերը և ապա իրենց գլուխները, որովհետև սրանք էլ սգի համար գլխները չեն լուացել:

Այնուհետև մինչև մի տարի սուգ են պահում, ուրախութիւնների չեն մասնակցում, հիւր, հարսանիք, ուխտ չեն գնում: Նշանաւոր տօներին ուրիշ գիւղ բնակող բարեկամները տեսութեան են գալիս և բերում են մի գառ կամ ոչխար յաւաշլամայ արածո. քահանային էլ օրհնել են տալիս գերեզմանը: Մեծ պատի առաջին օրը բոլոր գիւղացիները գնում են եկեղեցու գաւիթը, տանելով խմիչքներ և կերակուրներ: Այստեղ քահանան բոլոր ննջեցեալների համար մի ընդհանուր հոգոց է ասում, որից լետու բոլորը խառը նըստում, բերածներն ուտում են և ապա գնում, իւրաքանչիւրն իւր ննջեցեալը օրհնել տալիս:

Թաղման ծախսեր.

Պատանքի	50 կ. — 1 ռ.
Լուսադին եկեղեցուն	50 " — 1 "
Քահանային { Մինչև 21 տար. համար	60 ռ — 1 "
{ Աւելի հասակաւորի . 1 ռ. 20 "	— 3 "
Ամբիճքին	60 " — 1 "
Խաչահամբոյր գանձ ասելիս	50 " — 1 "
Ժմաճաշի և եօթնից հացի	30 ռ. — 40 "
Եկեղեցուն ամանների վարձ *)	40 " — 1 "
Գերեզմանահատներին՝ հին շորեր արժողութեամբ	40 " — 1 "
Գումար	34 ռ. 70 կ. — 50 ռ.

*) Ձանաղան մարդիկ եկեղեցուն նուիրում են ամաններ և գգալներ, որը տանում զործածում են ննջեցեալ կամ հարսանիք ունեցողները և սրա համար մի բան են վճարում եկեղեցուն: